

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 Տր.
 Վեցամսեայ 6 »
 Արսասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկայի համար
 Տարեկան 3 սր.
 Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 Իրանուցան սոյր առաջին
 երեսին համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է. երեքին
 սանթիմ սեղաններու համար
 20 Օլո գեղը կըլայ :

Պուշկարիոյ համար ձեռքի
 (Գ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ)

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկի
 Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեմ տրուի
 Արսասահմանի համար ձեռքի
 (Գ Ի Ն 20 Ս Ա Ն Թ Ի Մ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՒԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Ա. Զ. Գ.

Խորհուրդս նկատելով որ հար-
 սանիքի, թաղման, մկրտութեան
 և այլ ազգային վերաբերեալ
 գործառնութեանց ապահովի
 գրութիւնը ազգային գործոց կա-
 նոնաւոր ընթացքին արգելք կը
 լինին, որոշեց յայտնեմ խոր-
 հրդոյս հետ ըլլալիք ամբողջ գոր-
 ծառնութիւնը, առանց բացառու-
 թեան կանխիկ վճարմամբ լինին :

Ն. Ս. Մ. Կ. Ա. Տ. ՈՒ Փ

Սօփիայի մեր բաժանորդներէն
 կը խնդրենք որ հաճին իրենց
 թէ անցեալ և թէ այս տարուան
 բաժնեգրիները յանձնել մեր նոր
 գործակալ Պ. Հայկ Մ. Յակոբեա-
 նին :

Վիլհելմստորֆ, Պ. Խուլ կող-
 մով. — Ձեր գիրքը դժբախտա-
 բար չենք կարող առանձին գրք-
 քոյկով տպագրել, որովհետեւ
 միջոցներ կը պակսին. ուրիշ
 տպարանի մէջ տպագրել տալ
 կուզէք թարգմանեցէք և զրկե-
 ցէք, ու մենք երբ տեսնենք
 արժէ, կաշխատինք միջոցներ
 գտնել, քանի որ արգելքը
 պէտք է յատկացուի բարենպա-
 տակ գործի :

Ամերիկա, Շէլսէա Մասս,
 Ն. Գ. — Մեր կարծիքով աւելի
 լաւ է այդտեղ տպագրել տաք :
 Եթէ մեր միջոցները ներէին ու-
 րախութեամբ յանձն կառնէինք :
 Վերոյգրեալ պատասխանը կար-
 դացէք :

Փիլիպոս Աղապալեան, Ա-
 րաբկիրցի, որ երեք տարի ա-
 ռաջ Վառնայ կը գտնուի եղբր,
 հիմա յայտնի չէ ուր գտնուիլը,
 կը խնդրուի ամէն անոնցմէ ու-
 րոնք որ գիտեն անոր ուր գըտ-
 նուիլը հաճին խմբագրութեանս
 իմացնել :

ԱՊԱՌԱԺՆԵՐ

Խնդիրը հին է, բայց ինչ ա-
 րած—երբեմն ձեռնարկ խնդիր-
 ներ կան, որ ստիպում են նո-
 րոգել, Վասպուրականում և Հա-
 յաստանի ուրիշ տեղերում անթի-
 են հայերը. նրանց օգնութեան
 պէտք է հասնել :

Անցեալ օրերը Պաղճեան վար-
 գապետը մի քահանայի հետ միա-
 սին սկսել է գրամ հանդանակել
 կարօտեալների համար, և երե-
 տակայեցէք, Վառնայի պէս քա-
 ղաքում, շատ չնչին դումար է
 հաւաքվել :

Մի թէ՛ իսկապէս հայերս այդ-
 չափ քարսիրտ ենք, այդչափ
 անզգայ : Յեղափոխութեան հա-
 մար դրամ չը պէտք է տալ, ու-
 ըրովհետեւ «ստակը կը կորսուի...»
 դպրոցի համար դրամ չը պէտք
 տալ, որովհետեւ չը գիտեմ ինչ...
 հայ անթիւներին ստակ չը պէտք
 է տալ որովհետեւ ստակ չը կայ...
 Խեղճ հայերի հոգին դուրս ե-
 կաւ դրամ տալով... :

Վերջապէս ամօթ է. պէտք է
 մի փոքր էլ պատաւանդիր լի-
 նել, ազգային և քաղաքացի-
 ական արժանապատուութիւն ու-
 նենալ. և գոնէ կարելի թեղածի
 չափ օգնութեան հասնել մեր
 կարօտ եղբայրներին :

Մենք լսում ենք որ մի քանի
 մարդիկ մտադրութիւն ունեն
 օգտվել այցելու հովի ներկա-
 յութիւնից և առաջարկել «Վէ-
 սէլո» խմբին մի ներկայացում
 տալ յօգուտ Հայաստանի հացա-
 կարօտներին :

Հաւատացած ենք որ «Վէսէլո»
 խումբը սիրով և պատաւոր կեր-
 պով կընդունի այս առաջարկը և
 իր պարտականութիւնը կը կա-
 տարէ : Բայց հաւատացած ենք որ Վառ-
 նայի հայութիւնն էլ այս զար-
 ճութեան օրերի մէջ, մի երեք
 ժամ կը բաժնի իր սովորական
 զարճութիւններից, և մի քանի
 ֆրանքով թէ ինքը կը զարճա-
 նայ և թէ օգնած կը լինի իր կա-
 րօտ եղբորը :

Անցեալ օր թուրքերը ներկա-
 յացում ունէին իրենց չքա-
 ւոր աշակերտների օգտին : Ե-
 րեւակայեցէք որ թուրք հարուստ
 դասակարգը և երիտասարդու-
 թիւնը ամբողջովին ներկայ էր :
 Ես կարմրեցի, ամաչեցի, երբ
 զգացի թէ մեր ծաղրած, տգէտ
 և կոպիտ համարած թուրքերը
 աւելի սիրով նւիրել էին իրենց
 լուծման իրենց ազքատիկ աշա-
 կերտներին, քան Վառնայում
 ապրող հայերի ունեւոր դասա-
 կարգի մեծամասնութիւնը :

Սպառաժներ, ամաչեցէք թուր-
 քերից, կարմրեցէք, մի փոքր
 ցնցվեցէք և այցելեցէք այն ներ-
 կայացումին որը պէտք է տրուի
 ձեր անթիւ եղբայրներին գոնէ
 մի պատառ չոր հաց հասցնելու
 համար :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 30/11 Յունի.

Նախ եւ առաջ բարի լուր մը հա-
 ղորդեմ. Օրմանեան 300 ոսկիով ա-
 ւելի ծանր է այսօր քան ասկէ ամիս
 մը առաջ : Մի գարմանաք, հիմակ կը
 բացատրեմ :

Օրմանեան, պայրամէն քանի մը
 օր առաջ ելլալով իֆրաքի էր գացեր,
 փառաւոր մը կերեր, լայն փորը լե-
 ցուցեր, ախտները յոգնեցուցեր
 էր... :

Է՛, զո՛ւր էր անոր ախտներու
 յոգնութիւնը. «տիշ քիրասի» չպիտի
 ստանա՞ր : Սուլթան 300 ոսկի «ակ-
 ոայի վարձ» տուեր էր Օրմանեանի :

Հիմակ իմ եւ հոստեղի ծանօթնե-
 րուս մէջ վէճ կայ. ես կըսեմ ատիկա
 «կաշառք» է, «վարձատրութիւն» է
 Օրմանեանի հաւատարիմ ծառայու-
 թիւններու համար, իսկ ծանօթներս
 կըսեն թէ՛ ատիկա բան մը չէ, այլ
 պարզ թրքական սովորութիւն մը :
 Դուք վճարեցէք մեր վէճը :

Անցեալ օր գրած էի յափշտակուած
 խաւացի գեղուհու մասին :

Իտալական կառավարութիւնը
 սպառնաց թրքական քաղաք մը ուժ-
 բակոծել եւ իսկոյն Սիլվան իր հօրը
 յանձնուեցաւ, թէեւ արդարութեան
 նախարարը կըսէր իտալական զեսպա-
 նին, թէ ազլիկը ըստ չէր թի թի օրէնքի :

արդէն հասակն առած կը գիտուի եւ
 իր յօժար կամքով իսլամութիւնը ըն-
 դունած է : Աս ամէն քաջբունկները
 օղբ ելան, երբ նաւի ու թնդանթի
 անունը լսուեցաւ տաք արիւն իտա-
 լացիներու բերնէն :

Երկար ամիսներ մեր գինուորա-
 կան զինագործարանները (Աստուած
 գործարան համար) փորձեր կընէին
 հոս անծուխ վառօղ պատրաստելու :
 Ամէն փորձերը ջուրը ինկան եւ ու-
 չինչ կըրցին պատրաստել : Աս փոր-
 ձերու վրայ ծախսուած է շուրջ 7—
 8000 ոսկի : Վերջապէս Սուլթան յու-
 սահատած իր զինագործներէն եւ քի-
 միկոսներու անշնորհքութենէն վրճ-
 ոնց հրաւիրել 2—3 գերման վար-
 պետներ այդ գործի համար :

Յուշուար 24ին կայսերական ի-
 րատէսով մը հրամայուեցաւ 500 հոգիէ
 բաղկացած նոր ձիաւոր գունդ մըն
 ալ աւելցնել կայսերական 10—
 15,000նոց պահակազօրքին վրայ :

Սուլթանին միշտ քիչ կերելի իր
 շուրջը եղած իրկնապահ զօրքերու
 թիւը : Այդ նոր գունդի բնակու-
 թեան տեղը որոշուած է շինել Երզ-
 րազէն Վասփոր իջնող կայսերական
 պարտէզներուն մէջ, Արդէն աս գուն-
 դին ամէն անհրաժեշտութիւնները
 Պերլին ապսպրուած են ու քանի մը
 շաբաթէն կը հասնին :

Բոնի մահմետականացման զէպ-
 քերը կը շատնան. անցեալ օր տե-
 դական թիւրք թերթերը պարծան-
 քով մը գրեցին որ՝ Մերսինի մէջ
 յոյն ազլիկ մը իսլամական լոյս հա-
 ւատքն ընդունեց, եւ իր ցանկու-
 թեան համաձայն Աշիէ անունը ստա-
 ցաւ : Աղլիկը հազիւ 15 տարու է ե-
 դած : Մնողները կը բողբեն տեղա-
 կան յոյն հիւպատոսին, որ միջնոր-
 դութիւն կընէ, բայց զուր կանցնի :
 Տեղւոյս զեսպանները այս լսեցին ու
 գերմանացիներու ըսածնուն պէս
 «ականջուուն ետին գրեցին» :

Երիտասարդ պուլկար մը, չեմ գի-
 տեր հոգեկան ինչ սատանայական
 գրութեան մէջ յիմարութիւն մը
 կուենեայ մահմետականութիւն ըն-
 դունելու : Տղան հազիւ 18—19 տա-
 րեկան է եւ ծնողները թրքացապա-
 տակ են : Ետքէն կը զղջայ, կուզէ
 հոս ծնողներու քովը վերադառնալ,
 կառավարութիւնը կարգիլէ :
 Աս ալ թուրքաց օրէնքով չափա-

հաս կը համարուի ինչպէս Մերսինի յոյն ազգիկը, բայց յունական եւ պուլկարական օրէնքով երկուքն ալ անչափահաս են: Պուլկար գործակալը միջնորդեց որ տղան ձգեն ծնողաց լսող չեղաւ:

Երբ Պ. Կէշոֆի բողոքը անլսելի մնաց, յունուար 26ին իտալական, ռուսական եւ գաղղիական դեսպանները կծու բողոքագիր մը տուին Բ. Գրան, որ բռնի կրօնափոխութիւններու թիւը նորէն անել սկսած է, ուշք դարձուցէք:

Թէ պուլկար տղուն եւ թէ յոյն աղջկան գործը քննութեան յանձնուեցաւ, որ ըսել է թէ քանի մը օրէն իրենց ծնողաց գիրկը պիտի դառնան իբր անչափահասներ Եւրոպական օրէնքի մտքով:

Կիւրիկոյ կաթողիկոսութեան խընդիրը տարբեր գոյն մը կառնէ: Հետեւեալ անգամին այդ մասին կը հարգեմ:

ԲԱԺ

Փ. ՊՈԼԻՍ, 31 Յունիս.

Ներկայ թղթակցութեանս մէջ յիշատակելու արժանի էն կարևոր կէտը լսարաններու վերակառման, որ արդէն մասնաւորապէս շարժառիթը եղաւ ներկայ թղթակցութեանս գոյութեան: Ընթացիկ ամսուն 15ին, շաբաթ գիշեր, աղջկանց վարժարանին սրահին մէջ խօսեցան, առաջին անգամը ըլլալով Պ. Կ. Պիօնեան նիւթ ունենալով:

ԵՆԱՆՈՒՄԻՆ ՎՆԱՍՆԵՐԸ

- 1. Լսարանը ժողովրդին օգտին եւ կրթութեան համար է: 2. Գիտութիւնը ճշմարտութիւններ կը սորվեցնէ: 3. Առողջապահութեան կարեւորութիւնը: 4. Գրգռիչներու դերը: 5. Ճխախտին իբր վրգռիչ ունեցած փաստերը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՅ ՆԱՍԱԿ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ ԻՍ ՈՒՍՈՒՅՁԻՍ

ԳՐՈՇԱԿԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. Ասխորդ քիւիս եւ վերջ)

Լեհաստանի ասպտամբութեան ատեն, ռուս կառավարութիւնը յեղափոխական բոքրականտան կասեցնելու համար, կաշառեց լին ծանօթ գրագէտները որոնք իրենց գրչով ժողովրդին վրայ մեծ ազդեցութիւն ունէին եւ զանոնք Լոնտոն զրկեց, ուր ազգասիրութեան գիմակին տակ սկըսան հակաիդեալական բոքրականտան մը ընել: Մեղքը չեմ ասնել, Պ. Զօպանեան, բայց կը կասկածիմ, քանի որ ներելի է:

Ժողովրդին ճշմարիտ մակարոյծը, դուն հիմայ լաւ գտած ես զայն շահագործելու կերպը: Երբեմն, երբ ազգը տենդոտ խանդավառութեան մը

Երկրորդ ատենախօսը եղաւ Պ. Վ. Շահրիմանը, որ հետեւեալ նիւթին վրայ խօսեցաւ:

ԽՕՍԻԸ

- 1. Անոր ազդեցութիւնը ազգերու եւ ժողովուրդներու վրայ: 2. Ժողովրդին վերաբերմանը դէպի խօսողներն ու գրողները: 3. Զանազան կարգի խօսողները: 4. Խօսողի մը կոչումը եւ ճշմարիտ պարտականութիւնը: 5. Խօսքի կամ գրականութեան ընդհանուր ազդեցութիւնը ամբողջ քաղաքակրթութեան վրայ:

Իսկ ամսուս 29ին խօսեցան՝ Տիկին Էլիզ Զօրեանց, նիւթ ունենալով:

ԲՆԱԿԱՆ ԵՒ ԿՆԵՆԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

- 1. Բջիջները իբր հիմնական տարր գործարանաւոր աշխարհի: 2. Միաբնակիցներու կենդանիներն ու բոյսեր: 3. Բազմաբնակիցներու կենդանիներն ու բոյսեր: 4. Կենդանիներու եւ բոյսերու տարբերութիւնը:

Երկրորդ ատենախօսը՝ Պ. Վ. Մանուէլեան՝ խօսեցաւ հետեւեալ նիւթին վրայ:

ՀԱՅ ԿԻՆԸ

- 1. Կանացի հարցը (le feminisme): 2. Կնոջ ընկերական դերը: 3. Հայ կինը անցեալին եւ ներկային մէջ: 4. Ինչ կը պահանջենք հայ կինէն:

Ձեմ ուղեր կանգ առնել անցած շարժուման ատենախօսութեանց վրայ, այն պարզ պատճառով որ մի գուցէ անոնց տպաւորութիւնը քիչ մը մեղմացած ըլլալուն չի կրնամ իրական գոյներով նկարել. ուրիշ անգամ նորէն իրենց լսելու առիթը կունենանք, ու ան ատեն թերեւս կատարեմ

մէջ էր, քեզիպէսները յեղափոխութեան, կուրի, ցոյցի կամ «հրոսակային ասպատակութեան» անվատ փողաբները դարձած էին: «Ախ, Հնչեակ, Հնչեակ» կը պօռայիր դասարան մտած ատենը: Հիմայ, երբ յուսախարութեան մը պատրաստները աղէտքին անակնկալ մեծութեամբ դառնացած՝ եկան ընկճել ազգը վնասութեան տակ ու դժգոհութեան հակազդեցիկ մրմունջ մը սկսաւ բարձրանալ: Նախ խուլ ու վեհերոտ, դուք ալ ես մերկացած խուրդի պէս ծածուկ գործելու դերէն, առաջ նետուեցաք ձեր պառակական տրանսլիւսներով: ձեզի համար հանք բացուած էր, ու, շապիկ փոխող օձերու պէս, սկսաք դասապարտել, հայհոյել, անարգել ինչ որ քարոզած էիք քիչ առաջ եւ հէք ժողովրդեան կարկէր սիրաբ ալ աւելի խոցել ձեր թունաւոր լեզուով: Եւ որովհետեւ Գաշնակցութիւնը միայն կը տեսնէիք՝ աննկուն այս ընդհանուր դասալքութեան մէջ, անթիթ աղուէսներու պէս սկսաք կաղկանձել, երկկ արշաւանք մը ստատճառ բռնելով, այսօր՝ զէնքի փոխադրութիւն մը: Մոռցած յեղափոխական մարմնի մը իսկական նպատակը, — անուն մը որ մինչեւ այսօր ձեր վրայ կը կրէք— ձեզի բան գործ

պարտքս: Այժմ, միայն պէտք է յայտնել որ, երկու ատենախօսներն թէ շահեկան նիւթերն են եւ թէ լաւ խօսիչնուն համար շատ լաւ ընդունելութիւն գտան եւ արեք անգամ բուն ծափահարութիւն խլեցին:

Տիկին Զօրեան ալ վերի ատենախօսներուն տպաւորութիւնը՝ եւ թերեւս բան մըն ալ աւելի՝ թողուց մեր եւ մասնաւորապէս իր սեռակիցներուն վրայ: Թէեւ իր դասախօսութեան նիւթը քիչ մը բարձր, բայց իր պարզ բացատրութիւնները միացուցած դիւրահասկնալի օրինակներու հետ, ամէնքուն ալ, կրնամ ըսել, դիւրամատչելի եղաւ: Սկիզբէն մինչեւ վերջ իր նիւթին տէրն էր, ո՛չ մէկ չեղում, շուտուով չեկան դասախօսութեան ազդեցութիւնը կտորել: Ու այս ամենուն միացնելով կանացի նուրբ շեշտեր, սուր եւ անուշ ձայն մը անհուն լեզու մը, բնական եւ համարձակ շարժուածք ու դիրք, աւելի փայլ մը տուաւ դասախօսութեան:

Պ. Վ. Մանուէլեան իր ընտրած այդ կարեւոր նիւթին վրայ գրած ատենախօսութիւնը կարգաց, ուր սկիզբէն մինչեւ վերջ լաւ գաղափարներ, տաք ու տենդոտ երեւակայութիւն եւ սահուն ոճ մը կը տիրէր, միայն թէ, ինչպէս որ ինքն ալ անկեղծապէս խօսաւ մտնեցաւ, շունենալով ատենախօսի մը պէտք եղած ձեւերը կատարելու ընդունակութիւն, իր այդ իմաստալից ու սրամիտ գրուածքին ամենէն տաք եւ վառվառուն կտորները թող պիտի անցնէին եթէ պաղարիւնութեամբ ըսած մէկ երկու կատակները չի ցնցէին ունկնդիրներուն երեւակայութիւնը եւ ամբողջ ատենախօսութիւնը չի համեմէին: Ինչ-

ըրիք միմիայն Գաշնակցութիւնը հալածել, իբր թէ ան ըլլար հայ ազգին թշնամին: Զայն վարկարէկ ընելու համար, մինչեւ իսկ իր անձնուրաց նահատակներուն յիշատակը ջանացիք սրբազոծել եւ ուղեցիք անվեհեր Սեբորը իբրեւ «Գրօշակեան դրութեան» մէկ զոհը ներկայացնել, առանց խորհելու որ, Սեբոր Գաշնակցութեան շնորհիւ միայն Սեբոր եղած էր, եւ եթէ իրացնէ կարելի է զայն ու եւ մարմնի մը զոհը նկատել, այն ալ ձեզի պէս դաւաճաններու աւելի կը պատկանի, քանի որ կարգաբացնէք մասնիչը եւ սիրտ կուտաք անոր: Եթէ երբեք ուղղակի չէք մասներ ի հարկին... (*)

Բայց, պարոն, հարկ չի կայ աւելի երկարելու իրողութեանց այս ստոյգ

(*) Զօրանեան բարկանում է, երբ սխալմամբ ասում են թէ Սուլթանի կենաց է խմել: Մեր կարծիքով մարդ կարող է Սուլթանի կենացը խմել եւ այնքան բարոյական լինել, որ մասնութիւնը ոչ մի կերպ չարգարացնել: Օրինակ տաճիկ Ֆուստ փաշան կարող է Սուլթանի կենացը

պէս ըսի նիւթը խիստ շահեկան է, եւ Պ. Մանուէլեան շատ լաւ կընէ եթէ հաճի «Շարժում» միջոցով հրատարակել, որով, կը հաւատամ թէ, մեզի հետ ամէն ուշադիր ընթերցող ալ գոհ պիտի մնան:

Երկու ատենախօսներն ալ բուռն կերպով ծափահարուեցան: Ընդհատուներու միջոցին երգեցին վարժարանին աշակերտները եւ «Քնար հայկական» քանի մը անգամները գիտցած երէք-չորս երգերին: ասոնք ալ բուն ծափերով ընդունուեցան եւ ժողովրդը լաւ տպաւորութեան տակ մեկնեցաւ: Այնպէս կը կարծենք թէ որքան առիթը ներէ, «Գրասիրած» վարչութիւնը տրամադրութիւն ցոյց պիտի տայ ամէն տասնեակին գր մէկ անգամ լսարան կազմակերպել:

ԲԱՁԷ

ՊՐԱՅԻԼԱ, 2 Փետ.

Նախորդ գլուխեամբս լմացուցած էի տեղւոյս մէջ պատահած Խալիֆ անուն պարսիկի մը սպաննութեան դէպքը ինչպէս նաեւ այդ առիթի հայ եւ թուրքերու մէջ մօտալուտ ու հաւանական ընդհարման մը մասին: Բայց արձանագրութեան արժանի ուշադրաւ կէտ մը չէի կրցած ձեզ տեղակազրել, այն պատճառաւ որ դէպքէն շուրջ մէկ ժամ վերջը տեղի ունեցած էր:

Ինչպէս գիտէք, լաւաշածախ մօլլան խառնակութեան միջոցին խոյս տուած էր սպաննութեան տեղէն: Արդ՝ այս անգամը կապաստանի ուղղակի թուրք Հիւպատոսարանը եւ կը յայտարարէ թէ հայ յիղափոխականներ սպաննած են Խալիֆը. եւ թուրք

շարքը: Նպատակս քեզի համոզել չէ, որովհետեւ դիտեմ թէ՛ դուն իսկ համոզուած չես ըսածներուդ, փչուն մնախառնութիւն մը եւ փոքրոզի ատելութիւն մը քեզի միայն այդ սողորմ մրտտելու կը մղեն:

Լաւ հասկնանք գիրքար: Գու եւ ջու ընտանոցի ջոջիք մինչեւ այսօր գրածներէն, հակառակ ուշի ուշով կարգալու, չի կրցայ որոշապէս հասկընալ թէ՛ ի՞նչ ըսել կուզէք եւ ինչո՞վ կուզէք ազգը «ընդհանուր ասպատակութեան» պատրաստել, խօսք մը զոր երկու տարիէ ի վեր կը կրկնէիք, առանց ըմբռնել ուղեղու այն զերագոյն զոհողութիւնները զորս կենթադրէ այդ գաղափարը: Տարիներէ ի վեր կը պոռաք թէ՛ «Գրօշակ-

խմել եւ հային մասնելը վատութիւն համարել:

Իսկ Զօրանեան եւ Ֆուստ փաշա՛ ի հարկէ շատ տարբեր մարդիկ են: Ֆուստ հաւատարիմ, բայց ասպետական թուրք, իսկ Զօրանեան... ի հարկէ ոչ երբէք Սուլթանի հօրաբոլ որդին, որովհետեւ Սուլթանի ազգական Տամատ Մանուկ փաշան ասպետացեց թէ նրան ազգականները այնքան էլ սարուկ չեն: Մ. Ս.

հիւպատոսը՝ նէճիպ էֆէնտի՝ որ շատ դիւրահաւան և կատարելապէս անփորձ մէկն է, խաբուելով մօլլաի յայտնութենէն, ալ առանց ետին նայելու իսկոյն կը վազէ տեղւոյս ոստիկանութեան պետին և անկէ ընդհանուր բռնաբերութիւն հետ ի հետ պատմելով և քիչ մըն ալ իր կողմէն չափազանցելով եղբուրթիւնը և ներկայացունելով Խօսիւֆը իւր զոհ մը հայ յեղափոխականներու գանակին:

Ոստիկանութեան պետը և բռնաբերութիւնը վրդոված հապճէպով կը գիւմն սպաննութեան տեղը, ուր արդէն Խօսիւֆը մեռած կը գտնեն. բայց եղբուրթիւնը ստուգելու նպատակաւ տեղւոյն վրայ բացուած նախնական հարցաքննութեան մը արդիւնքը՝ նոյն իսկ պարսիկներու կողմանէ տրուած՝ այն կըլլայ թէ Ալի անուն պարսիկ մըն է մարդասպանը:

Ռուսէն կառավարութեան երկու ներկայացուցիչները այն հակառակութեան հանդէպ՝ որ կը տիրէ երկու յայտարարութեանց մէջ՝ չեն կրնար ինքզինքնին զօգել ծանր ակնարկութիւններով բացատրութիւն պահանջել նէճիպ էֆէնտիէն խնդրոյն քմածին խնդարութեան վրայ, որուն այս վերջինը գոհացում չի կրնալ տալուն՝ կը խայտառակուի ի ներկայութեան, հայ, թուրք, քուրդ և պարսիկ խառն բազմութեան:

Նէճիպ էֆէնտի անտարակոյս այս տեսակ ցած նուաստացումի մը չի պիտի ենթարկուէր եթէ քիչ մը չըջահայեցողութեամբ և անաշուտութեամբ վարուելով նախ եղբուրթիւնն իր ինքնագէտ իրականութեան մէջ սերտած ըլլար և այնպէս Ռուսէն կառավարութեան

բողոքէր: Ամեն երկրի մէջ տիրող օրէնքներն բանտարկութեան և տուգանքի կենթարկեն բոլոր այն անհատներն որոնք մի ուրիշ անհատի վրայ այս տեսակ քմածին ու անտեղի զրպարտութիւններ ընել կը փորձեն առանց շոշափելի ապացոյցներու: Նէճիպ էֆէնտի՝ որ կառավարութիւն մը կը ներկայացունէ, արդեօք կզգայ թէ ի՞նչ տեսակ պատժոյ կենթարկուին երբ կառավարութեանց ներկայացուցիչներն ամբողջ ժողովուրդ մը կամբաստանեն յանրապետ: Արդարեւ թուրքքիոյ մէջ ազատ են ու համարձակ այդ կարգի շահատակութիւններ ու շարակրատութիւններ և մինչև իսկ պատուանշաններով կը վարձատրուին. բայց պէտք է դիտնալ որ ուրիշ ամէն երկիրներու մէջ այս տեսակ արարքներ պաշտօնակութեամբ և մինչև իսկ բանտարկութեամբ ու տուգանքով կը պատժուին ինչ որ նէճիպ էֆէնտի և ո՛չ մէկ կերպով ախորժելի կրնայ ըլլալ: Արդ՝ բարեկամաբար կը յորդորենք զինքը որ եթէ կողմ ուղղամտութեամբ անկողմնակալութեամբ պարտաւոր դիրքի մը մէջ ապրիլ, պէտք է զգուշանայ այդ մօլլաներուն նման ստորին ու ցած արարածներու խօսքին հաւատալով անտեղի յաճակումներ ընել և ջանալ պատուազուրկ ընել այնպիսի ժողովուրդ մը որ միշտ հանգարտ իր գործերովն է զբաղած երբ իր պոչին կոխող չէ եղած:

ԿՇԻՌ

ՅԱՇ, 1 Փետրվ.

Ռուսմանիոյ հայոց որչա՞ք գրեցին, որչա՞ք որ թմբուկներ զարկին իրենց զլխուն վրայ և

սրտածմլիկ կերպով նկարագրուեցաւ Հայաստանի ժողովուրդին ցաւալի վիճակը, որ մէկ կողմէն կարմիր գազանը և միւս կողմէն իր ընկեր սովը՝ կը ջարդեն ու կը ջարդեն խեղճերը, սակայն այս ամէն գրութիւնք շարժեցին մեր Ռուսմանիոյ անգութ հայոց սրտին և մանաւանդ աղա շոջերուն, որ ապառաժներու նման անտարբեր կը դիտեն: Ապառաժ քարերը մինչև իսկ գութ ելան. բայց ասոնց սրտի սատկած պէօճէկը չի շարժեցաւ, որ խղճան ու օգնութեան ձեռք կարկառեն իրենց ողբացեալ եղբարց, և երբէ՞ք ալ չի պիտի ընեն: Այս պատճառաւ ի՞նչ որ պիտի գրեմ, միայն Ռուսմանիոյ հայ տիկնանց համար է և ո՛չ թէ իրենց, զի թուրքերէն առակ մը կայ որ կը ըսէ՝ «աղնաբանա սիվրիսինէկ սազ կէլիր», աղնամանա տավուլ զուրնա ազ կէլիր» . վերջապէս, այսչա՞ք ալ անխղճութիւն:

Այո՛, կուզեմ կոչ մը ընել Ռուսմանիոյ հայ աղնա տիկնանց, ու լուրջտես կը տեսնամ որ իրենք ալ իրենց աղաներուն պէս անտարբեր կեցած՝ ոչինչ չեն զգար և միմիայն հաճոյքներով ու «մօտաներով» մոլորուած են ու հարկընդմտաբար կը մտնեն, առանց մտածելու անգամ մը թէ, հո՞ն, հացի կարօտութիւն կը տիրէ:

— Ո՛վ Ռուսմանիոյ հայ տիկնաներ, միթէ ձեր փափկասուն սիրտերն ալ այդչա՞ք անզգայ են, որ դուք ալ ձեր կարգին մէջ անտարբեր կը մնաք, միթէ չէ՞ք լսեր ձեր քոյրերուն հառաչները, որ «հաց» կաղաղակեն և ո՛չ թէ «մօտա» . միթէ դուք ալ ձեր աղաներուն պէս անգութ ըլլալ կուզէ՞ք. է՛, ի՞նչ կըլլայ եթէ

վաղուան «մօտա» չըջաղգեստեն զրկուիք ու անոր դրամը ձեր թշուառ քոյրերուն զրկէք. որչա՞ք բաղձալի է մեզ, որ դուք ալ ձեր եղբայրսիրութիւնն ու հայրենասիրութիւնն ցոյց տաք. դիտեմ որ մեծ դեր կարող էք կատարել ձեր աղաներուն վրայ եթէ, եթէ միայն կամք ունենաք:

— Ո՛վ Ռուսմանիոյ հայ տիկնաներ, ինչո՞ւ չէք միանար ու «օգնութիւն» անունով ընկերութիւններ կազմեր ձեր մէջ որ հանգանակութիւն ընելով օգնութեան ձեռք կարկառէք ձեր թըշուառ քոյրերուն . . .

Ահա տեսէ՛ք ձեր դրացի—Սուչավայի հայ տիկնաները նախագահութեամբ Աղնուափայլ Ասպետուհիի մը, կարապետեան գերդաստանին, Հայաստանի կարօտելոց համար ընկերութիւն մը կազմած են, որոյ նպատակն է օգնել խեղճ Հայաստանի ժողովուրդին: Ի՞նչ բարի և վեհ գործ, որ Սուչավայի հայ տիկնաները այս տեսակ բարի գործի մը սկսած են. յարատեւութիւն կը մաղթեմ իրենց և կը խնդրեմ որ միշտ վառ պահեն իրենց սրտերուն մէջ ազգասիրութեան սէրը, նաեւ կը յուսամ որ մեր Ռուսմանիոյ հայ տիկնաները օրինակ առնելով չի պիտի զլանան սոյն տեսակ բարի ձեռնարկի մը սկսելու որպէս զի իրենց դրացի քոյրերուն քով պզտիկ չի մնան և օր մըն ալ այս տողերուն մէջ իրենց բարի անունին յիշատակուի: Յուսամ որ այս իմ փոքրիկ կոչս պիտի շարժէ իրենց փափուկ սիրտերը:

Քաղաքս շուրի պակասութիւն

եան գրութիւնը՝ դէ՛ է, որովհետեւ արշաւանքներ կը կազմակերպէ. եւ արշաւանքները վնասակար են, քանի որ տեղւոյն իսլամ ազգաբնակչութիւնը կը զրգոնի և ջարդերու պատճառ կըլլան, — որովհետեւ զէնք կը փոխադրէ, եւ զէնք փոխադրելը վնասակար է, քանի որ դինակիր խմբերը կրնան թշնամիներու հանդէպիլ և ընդհարումներ ունենալ, ինչ որ տեղւոյն մահմետական ազգաբնակչութիւնը կը զրգոնէ և կոտորածներու տեղի կուտայ, որովհետեւ ուսանալիք կան անոնց մէջ, եւ ուսուցանելը վնասակար են, քանի որ . . . հայ չեն: — Ներողութիւն, այնքան ուսուցանող մասին ձեր գրածները ջիղերուս զպած են որ, ամէն անգամ այդ բառը գործածելու կը վարանիմ թէ՛ իսկապէս անոնք ալ հայ են— ըսել կուզէի, քանի որ անոնք «ուսական գործիքներ» են:

Դուք որ ինքզինքնիդ նախանձախնդիր կը ցուցնէք ազգին վիճակին և բուր վայնասուններով զայն ողբալ կը ջանաք, ըսէք, ի՞նչ ընենք: — Էֆէնտիմ, խոհականութեամբ ու լրջմտութեամբ շարժելու է. ճիշդի պէս, կամայ կամայ քարելու է, մեռած ձեւանալու է, որպէս զի տաճիկ կառավարութիւնը ուշադրութիւն չի դարձնէ մեր վրայ:

— Բայց, պարոն, խոհականութիւն կամ լրջմտութիւն, ճիշդի պէս զանազալ կամ յիտի պէս ցատկուտեւ, ատոնք գործունէութիւն չեն կազմեր: Ի՞նչ ընելու ենք ձեր սիրելի «ընդհանուր ապստամբութիւնը» իրականացնելու համար:

— Էֆէնտիմ, այնպէս մը ընելու է որ, ամբողջ Հայաստան, առանց տաճիկ ուշադրութիւնը գրուած ըլլալու, մէկէն ի մէկ, մէկ օրուան, մէկ ժամուան, մէկ վայրկեանի, մէկ երկվայրկեանի մէջ ապստամբութեան գրօշալը պարզէ Արշակունի մինչև Ետանա, Մերսին, և անէն մինչև Կիրատոն, Սամսոն, բոլոր հայ գաւառները, տքի կանգնին . . .

— Բայց, պարոն, այդ ձեր ըսածը երբ է, ի՞նչ ընելու է, որպէս զի . . .

— Է՛հ, հիմալուհիմայ երգելու է:

Ահա, պարոն Չօպանեան, թէ ո՛ւր կը յանգին ձեր որդիները թիւնները, Գառնապարտել, հալածել, նախատել, զրպարտել մարմին մը, որ ինք բոլոր ուժը տուած է միմիայն իր հայրենիքին փրկութեան գործին աջակցելու. խաբիլ հասարակութիւնը առանց կարմրելու, անկէ քանի մը ֆրանք

կորդելու համար. դաւաճանել ամէն սրբութեան, ամէն սկզբունքի դէմ, լուր անհատական կիրքեր յագեցնելու համար, և՛ այս ամենէն ետքը, լքանել ազգը, մեռելութեան հրաւիրել զայն, երբ ամենէն աւելի իր կենդանութիւնը ապացուցանելու պէտք ունի: Անպատկառ լրբութեան ա՛լ անդի ծայրէն է աս, Իրաւցնէ, եթէ թիւրք կառավարութիւնը իր ամբողջ պիւտճէն զոհէր, ձեռք պէս օսկան մը չի պիտի կրնար ունենալ:

Ու կը զարմանանք, երբ թուրք կառավարութիւնը հայոց վրայ կը ձգէ ջարդերու բոլոր պատասխանատուութիւնը: Ձեռք սորվեցաւ. Պ. Չօպանեան, անկէ ետքը թրքերէն գրեցէք ձեր յօդուածները, թերեւս աւելի դիւրութեամբ ձեր նպատակին կը հասնիք և Պօլսոյ Արասայի ու Անուիին ձեռքը ալ հայերը գատապարտելու համար կարեւոր փաստեր հաղորդած կըլլաք . . .

Չէ՛, մենք չենք խաբուիր ձեր ծրարած քարոզներն: Հայ ժողովրդի առջև բացուած ուղին գերազանցօրէն որոշ է. կամ համակերպիլ ու ամէն ինքնապաշտպանութեան միջոցներէ հրաժարելով, ըլլայ առժամապէս, ըլլայ յաւիտեանապէս, յամբ, անձայն, բայց սխտեմաթիքօրէն կազմուած

հալածանքներով բնաջինջ ըլլալ. կամ կուռիլ, շարժիլ և զիւսացազնական ինքնապաշտպանութեամբ մը վճռել իր բազը. կորուստ կամ ազատում: Սպասել անկարելի է, որովհետեւ թուրքը վաղուց վճռած է մեր անհետացումը. մենք շարժիք կամ ոչ անիկայ պիտի հալածէ, պիտի ջարդէ զմեզ, եւ ասոր համար պատրուակ չի պակսիր իրեն: Թո՛ղ սպասէին, եթէ կարելի էր, «խոհմարաք» Սասունի կոտորածին առիթ տուողները, թո՛ղ սպասէին Պապը—Ալիի ցոյցին «ըջամիտ» հերոսները և ԳՅԻ անզ ջարդերու անխորհուրդ թելադրիչները, որպէսզի ժողովուրդը յուսահատ վրէժխնդրութեան մը գիրկը չի նետուէր, ի զուր մի փորձէք գաւաճանի ուրացումներով ձեր վրայէն պատասխանատուութիւնը նետել: Եւ ապահով եղիք որ, որչափ ալ հալածէք ու զրպարտէք Գառնակցութիւնը, անիկա միշտ կանգուն պիտի մնայ, քանի որ ազատութեան ոգին ու հայրենիքի սէրը զեռ կենդանի է հայ սրտերու մէջ:

Քու սնարժակ աշակերտ
ՇԱՀԱՊ
Ֆիլիպէ

ունենալուն պատճառաւ, քանի մը տարիներէ ի վեր կառավարութիւնը ջանք կընէ, որ առատ կերպով ջուր բերուի, որպէս զի ամառուան տաք եղանակներուն ժողովուրդը ծարաւ չի մնայ, և այս պատճառաւ անուանի ջրաբաշխներ բերելով չի կարողացան ո՛չ մէկ արգիւնք տալ, արգիւնքը միայն սա եղաւ որ մեծկակ գումարներ կուլ առին:

Մօտերս հայ ազգի Տ. Գրիգոր Յովեան, աստղաբաշխ և ջրաբաշխ քաղաքս զարով առաջարկեց քաղաքապետութեան թէ ինքը կարող է այնչա՞փ առատութեամբ ջուր բերել, իրենց խնդրածէն աւելի, և չէ թէ այնչափ մեծ գումարներ ծախք ընելով— Եւրոպայի «անուանի» ջրաբաշխները 20 միլիօն ծախք որոշած էին ջուր բերելու համար իսկ Տ. Յովեան միայն 5 միլիօն պէտք է կըսէ: Իր ծրագիրը ներկայացուցած է՝ որը ընդունելի կերբերի: Պէտք է գիտնալ որ մեր հայը ջուրը չէթէ հեռուն զըստնուած գետէն պիտի բերէ ինչպէս որ միւսները կուզեն բերել, այլ անձրեւի գոյութիւն է և քաղաքէս 2 ժամ հեռուորութեամբ զաշառկայրէ մը: Տեսնենք թէ ի՞նչ արգիւնք պիտի ունենայ: Յաջողութիւն կը մաղթեմ մեր տաղանդաւոր հայուն:

Ա. Ր Մ Ա Ւ Ի Ր

ԲԱՅ ՊԱՍԱՍԻԱՆ

Պերլինի լուսաւոր և գիտնական անձինք որ մեծ գումարներ ինձ յանձնեցին, զիս աղէկ կը ճանչնան և ինձմէ գոհ են: Պուկարիոյ հայերն ալ զիս ճանչցան: Միայն ես շատ խաբուեցայ, որուն որ օգնեցի, աւելի պահանջող եղաւ, ապերախտութիւն ցուցուց սպառնալիքներ ըրաւ:

Օր. Բէգլարեանի հոս թողած վիրաբուժական նիւթերէն միայն բամբակ, փաթածան ու կտաւ կրնամ բժիշկներու տոմսակներով չքաւոր հայ գաղթականներու տալ ձրի: Իսկ գործիքներ ու դեղորայք կերթան Հայաստան առաւել կարօտներու համար:

Տօք. Լէպսիուս մի քանի շաբաթ առաջ հոս էր և Տօքթ. Աթաբէկեանցը հրաւիրեցինք իմ տունս տեսակցելու և տեսնուեցաւ: Բայց այն իր կարծիքներէն մէկն ալ չի բացաւ անոր: Ինչո՞ւ:

Ա. ԱՄԻՐԻՆԱՆԵԱՆՑ

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՍՄ ՀԱՒԱԿԱՄՈՑ

Հին և նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի վառնա, Ա. Զարպիսանկիանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ դպրոցական և վիպական գրքեր. գրամի փոխաբէն կընդունի նաեւ նամակագրոյմ. Գնում և վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրողներու:

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրուար 1ին Պօլսէն հեռագրով «Թայմզ»-ին կը հաղորդեն թէ՛ քանի մը օրէ որ Ռուսական դեսպանը Սուլթանէն իրատէ մը ստացած է կարսէն մինչեւ էրզրում շինուելիք երկաթուղիի գծին սկզբնական կարգադրութիւններու մասին: Այդ նախնական ծրագրին գլխաւոր կէտերը բոլորովին կը նմանին Պաղտատի գծին սկզբնական պայմաններուն, որ անցեալները եղան Թուրքիոյ և Գերմանիոյ միջեւ:

Ռուս-թրքական այդ ծրագրեալ երկաթուղին պիտի թուրքիա մտնայ Գարա-Ղուրղանէն և պիտի անցնի Արաքսի հովիտին երկայնութեամբը. պայմանագրութեան մէջ որոշուած է որ Ռուսիա բոլոր առաւելութիւնները պիտի ունենայ ոչ միայն շինուելիք գծին շինութեան մէջ, այլ և բոլոր այն գծերուն, որոնք պիտի միացուին այդ գլխաւոր գծին:

Ֆինլանտիոյ ժէնէրալ նահանգապետը նոր կարգադրութիւններ ըրած է՝ օգտարականներու ֆինլանտիա ճամբորդելու և մայրաքաղաքին հիւրանոցներու մէջ ընդունելութեան համար:

Քանի մը շաբաթ առաջ՝ զաղանի խորհրդական Սպար ֆինլանտիոյ նահանգներէն միոյն նախկին նահանգապետը, թէ և ինքը ֆինլանտացի, հրապարակային փաստով զգացած է ֆինլանտիեան Ռուսացներու համար եղած ձգտումներու հետեւանքը: Սպար ծերակոյտի անդամ ընտրուած է կառավարութեան կողմէն, և այդ մեծ վիշտ պատճառած է ֆինլանտացիներուն: Ու երբ այդ ծերակոյտի նոր անդամը դէլէֆօնով կը դիմէ Հելսինկի-ֆորսի հիւրանոցներուն, որ իրեն արամագրութեան տակ քանի մը սենեակ դրուին, ամէնքն ալ պակը տասխանեն «բոլոր սենեակներն ալ բռնուած են»: Սպար կուզայ Հելսինկիֆորս, կիջնայ հիւրանոց մը, որ իմացուցած չէր իր գալը: Բայց երբ հոն բնակող ֆինլանտացիները կիմանան հիւրին ով ըլլալը, իսկոյն ամենքն ալ կը հեռանան:

Իսկ գալով հիւրանոցի տէրոջը՝ ան սկսած է անանկ խնամքով մը լուալ իր հիւրանոցը որ ծերակոյտի անդամը բոլորովին հանդատութիւն չէ գտած: Իսկ ճաշի համար բացի հացէն և ջուրէն ուրիշ բան չի գնալով կը գանգատի նահանգապետին և ան ալ նոր օրէնքները կը դնէ:

Մեր հայերը թող՝ տեսնեն թէ ինչպէս ամենազօրեղ բռնակալները կարհամարեն:

Անգլիացիները 24 օրուան մէջ կորուցած են Բէնկպուրկի և Կօլէղպէրկի շրջականներու այն բոլոր տեղերը որ շահած էին երեք շաբթուան մէջ: Ըստ անգլ-

լիական թերթի մը հասած հեռագրին՝ անգլիական նահանջը շատ ծանր փաստ մըն է: Մեծ ճակատամարտ մը տեղի ունեցեր է և կորուստը մեծ, թէեւ անգլիական ժէնէրալները կը գրեն որ թշնամիներն ալ մեծ կորուստ ունին:

«Փ. Չայթունկ» Պօլսէն հեռագիր մը ստացած է, որով կը հաղորդեն թէ Տամատ Մահմուտ Փաշան և իր երկու զաւակները առանց ու է պայմանի պիտի վերադառնան եղեր Պօլսի:

Փառելի թուրքաց զեսպանը հեռագրած է Սուլթանին, որ այդ եղածէ շնորհիւ Լուպէի և Կօնսթանթնի միջամտութեան:

Սթէնքէն «Նասիօնալ Յայթունկ»-ին կը հաղորդեն թէ հոն գտնուող երկրասարդ թուրքերը, մօտ 19 հօգի, մատուցել են թերթ մը հրատարակել փետրուարին: Հրատարակչներուն պարազուլան է նախկին պաշտօնայ մը Թուատ պէյ, Թուրք կառավարութիւնը ճիգեր թափած է որ այդ երիտասարդ թուրքերը արտաքսուին Յունաստանէն, բայց չէ յաջողած:

Ռուսական դեսպանը նորէն Բ. Գրան նօթա մը տուած է հայ գաղթականներու հայրենիք վերադարձին համար:

Մարեշալ Բօպէրտս փետր. 2ին հեռագրած է թէ ժէնէրալ Յրէնշ կշտապէ անցնիլ Մօտեթը Կլիբորթիֆտի քովէն, քանի մը բարձրութիւններ տիրած է և 3 Պօէրական բանակ պաշարով միասին: Նոյն միջոցին անգլիական զօրքերը տիրած են ուրիշ երկու պօէրական բանակներ: Պօէրները գիմագրած չեն. անգլիական կորուստը չնչին է:

Յրէնշ արդէն հասած է Բէմպրէյ թնդանօթներով և հեծելազօրքով միասին:

Նախարարութիւնը յայտարարած է թէ Բօպէրթ, Յրէնշի Բէմպրէյ հասնելը հեռագրած է Թափօբստալէն, որը պօէրներուն պաշար հասցնող գլխաւոր քաղաքն էր:

Կրկին Բօպէրտս պաշտօնապէս հեռագրած է թէ ժէնէրալ Յրէնշ կը շրջի Բէմպրէյի հիւսիսային կողմերը. մէկ գունտ մը կը հետեւի պօէրներուն պաշար տանող զօրքին:

Անգլիական թերթ մը կըսէ թէ Թրանսպլը Եւրոպան կը պատրաստէ տարօրինակ տեսարանի մը և կը շարունակէ— մեր լսած տեղեկութիւններու համաձայն, որոնք մեր կարծիքով ստոյգ են, ստուար քանակութեամբ պօէրուհիներ կուզեն իրենց ամուսիններու հետ միասին պատերազմիլ:

Կրան թէ նախագահ Բրիկէր և ժէնէրալ Թուպէր խոստացած են կիներուն թոյլ տալ զէնք վերցնել, եթէ անգլիացիները ոտք դնեն հասարակապետութեան հողին վրայ:

—)(—

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱՆ

ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 389 Իսկիդ-պաշի

Կը վաճառուի ծխախոտ, բոթայի և աղբրազարի ամէն տեսակ բույր նաեւ զանազան տեսակ սիկարներ: Զձ Թուականին հրապարակ կլած Պուկարիոյ գահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փոթալներ, որ այժմ չեն գործածուիր: Նոյնպէս և կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան զիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Զարբանէլեանի գրատունը և խրատագրութեան մէջ:

ԳՆՐԵՋՐԱՏՈՒՆ ՍԱՆԹՐԱԼ

Տ. ԹԻՒՖԷՆԿՅԱՆԻ

Մուսալլաի Թաղապետական պարսկի զիմաց, նախկին Անկի Սլափօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

ԽՄԱԿԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐժՈՒՄ»Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակազուլու, հարսանեկան հրաւիրագիր, մահազգ:

Գիները յոյժ դուրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅՆՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆՍԻԿ

ՊՕՐՍԱ

Վառնա 8, Քէսրիար

Table with 3 columns: Item, Price 1, Price 2. Includes items like Վազօն, ՊՈՒՂՏԱՅ, ՄԻՍԻՐ, ԱՐԲԱ, ԵՈՒԼԱՑ, ՅԱՍՈՒԼԵԱ, ՏԱՐԸ.

Table with 3 columns: Item, Price 1, Price 2. Includes items like Առապա, ՊՈՒՂՏԱՅ, ԱՐԲԱ, ԵՈՒԼԱՑ, ՄԻՍԻՐ, ՏԱՐԸ, ՅԱՍՈՒԼԵԱ.

Table with 3 columns: Item, Price 1, Price 2. Includes items like Հէր կիւն կէլէն մալ, ՊՈՒՂՏԱՅ, ԱՐԲԱ, ԵՈՒԼԱՑ, ՅԱՍՈՒԼԵԱ, ՄԻՍԻՐ, ՏԱՐԸ.

Առապա մուսմէլէսի հարուէն 22.40 ֆրանք հիսապը իլէ տիր.